

### ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

## ՄԻԳՐԱՅԻՈՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՅՈՒՄԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում արդի միջազգային միգրացիոն գործընթացների վրա ազդող գործոնները՝ միջազգային իրավական դոկտրինայի լուսի ներքո: Մասնավորապես, հոդվածում հեղինակն անդրադառնում է համաշխարհային մակարդակով նոր սոցիալական այնպիսի երևույթների ինչպիսիք են աշխատանքային վիրտուալ միգրացիան, տեղեկատվական-լրատվական միգրացիան, պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը) և այլն: Հոդվածում հեղինակի կողմից համապատասխան գիտալրակտիկ վերլուծություններ են ներկայացվում միջազգային միգրացիոն գործընթացների վրա ազդող վերոնշյալ սոցիալ-իրավական երևույթների վերաբերյալ:

*Հիմնարարը՝ աշխատանքային վիրտուալ միգրացիա, տեղեկատվական-լրատվական միգրացիա, պետությունների վիրտուալ տարածք (սահման), գյուղա գյուղ, միգրացիոն գործընթացների այլակերպում (տրանսֆորմացիայի):*

Ժամանակակից աշխարհում միգրացիոն գործընթացներն իրենց տարածականությամբ և նրանցում ընդգրկված մարդկանց հսկայական քանակով դարձել են պետությունների մտահոգության և առաջնային լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Բավական է ասել, որ փախստականների ՄԱԿ-ի բարձրագույն կոմիսարի գործող վարչության տվյալներով ներկայումս աշխարհում փախստականների քանակը մոտ 25-30 միլիոն մարդ է<sup>1</sup>:

Միաժամանակ աշխարհում առկա են մոտավորապես 100 միլիոն աշխատանքային միգրանտներ և նրանց ընտանիքի անդամներ<sup>2</sup>:

Երևույթի ուսումնասիրության մասնագետների մոտ և հասարակության մեջ ամրագրվել է այն տեսակետը, որ միգրացիայի տարածմանը խթանում են տնտեսական, սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական, էկոլոգիական գործոնները:

Դիտարկումները ցույց են տալիս, որ պետություններում վերը նշված գործոնները դրսևորվում են ոչ միաժամանակ: Առանձին երկրներում մարդկանց տեղաշարժի ակտիվացման պատճառ կարող են դառնալ սոցիալ-տնտեսական գործոնները, իսկ մյուսներում՝ ասենք, քաղաքական շարժառիթները: Այսպես, Հայաստանի Հանրապետության, որը աչքի է ընկնում ներքաղաքական կայուն զարգացումներով, բնակչության մի հատվածի արտահոսքը երկրից պայմանավորված է հիմնականում սոցիալ-տնտեսական գործոններով:

Միգրացիան իր տարատեսակ դրսևորումներով ընդգրկում է մարդկային գործունեության գրեթե բոլոր բնագավառները: Դրանով է պայմանավորված, որ միգրացիայի ոլորտի խնդիրները գտնվում են տարբեր մասնագիտության գիտնականների ուշադ-

րության կենտրոնում:

Միգրացիան, որպես երևույթ, ուսումնասիրության առարկա է դարձել իրավագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի և անգամ հոգեբանության համար: Ուստի, միգրացիոն իրավունքի հիմնարար ուղղությունների վերլուծականը, երևույթի առաջացման հիմնավորման անհրաժեշտությունից ելնելով, հետազոտողին հարկադրում է իրավագիտության հետ զուգընթաց այս կամ այն չափով ներխուժել այլ գիտությունների ոլորտները:

Միաժամանակ գիտակցվում է, որ իրավագիտության, սոցիոլոգիայի և վերը նշված մյուս գիտությունների տեսական դրույթների հիմնավորվածության պարզելու միակ ճանապարհը պրակտիկան է:

Հասարակական գիտությունները, ինչպես նաև իրավագիտությունը, տարբեր երկրներում ապրող բնակչությանը դիտում են ոչ միայն որպես մարդկանց համահավաք ամբողջություն, այլև հասարակական կապերի և հարաբերությունների դրսևորման յուրահատուկ և հիմնավորապես ձևավորված համակարգ:

Մարդկանց միջև ձևավորված համընդհանուր և միջանձնական հարաբերությունների դրսևորում է հանդիսանում նաև միգրացիան:

Բնակչության միգրացիան այն հասարակական երևույթներից է, որն անմիջական և տարատեսակ ներգործություն է ունենում պետությունների և նրանցում բնակվող ժողովուրդների կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա: Ըստ որում, միգրացիայի դրական, թե բացասական ազդեցությունը տարբեր ձևով է դրսևորվում միգրանտներին ընդունող կամ արտերկրներ միգրանտներ ճանապարհող պետությունների վրա:

20-րդ դարի հայտնի պատմական փաստերը՝

ուրբանիզացիան, կլիմայական փոփոխությունները, երկու համաշխարհային պատերազմները և տարբեր ազգերի ու ժողովրդների նկատմամբ իրագործված ցեղասպանությունները՝ իրենց անդառնալի հետևանքներով, ինչպես նաև տեխնիկական (գիտական) աննախադեպ առաջընթացը, որը հանգեցրեց մարդկանց, տեղեկատվության և ապրանքների արագ տեղաշարժին, որի արդյունքում համաշխարհային միգրացիոն գործընթացներն արագացան: Մասնավորապես, համակարգչային-տեղեկատվական առաջընթացի ամենամեծ ձեռքբերումը համացանցի (ինտերնետ) ստեղծումն էր, որը, ինչպես նշում էր «գլոբալ գյուղ»<sup>3</sup> եզրույթի հեղինակ, կանադացի հայտնի փիլիսոփա Մարշալ Մաքլուհանը (Marshall McLuhan), «...համացանցը մարդկանց միջև ջնջում է բոլոր սահմանները՝ տարածություն, ժամանակ, մշակույթ, ավանդույթ, աշխարհայացք և այլն, որի արդյունքում աշխարհն այնքան է սեղմվում, որ կարծես դառնում է մի ամբողջ գլոբալ գյուղ...»<sup>4</sup> և այս ամենի արդյունքում մարդը դարձել է կոսմոպոլիտ<sup>5</sup>, որի արդյունքում 20-րդ դարի վերջից սկսած, համաշխարհային միգրացիոն գործընթացներն այլակերպման (տրանսֆորմացիայի) են ենթարկվել, այն է՝ մարդը ցանկանում է անձամբ մասնակից դառնալ վիրտուալ և ռեալ մակարդակներում, աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող քաղաքական, մշակութային, իրավական, տնտեսական և այլ բնույթի իրադարձություններին՝ ջնջելով բոլոր սահմանները:

Վերջին ժամանակներում համացանցի հասանելության տարածման հետ մեկտեղ, համաշխարհային մակարդակով նոր սոցիալական երևույթ է ի հայտ եկել, որը մենք պայմանականորեն կանվանենք «աշխատանքային վիրտուալ միգրացիա» կամ «տեղեկատվական-լրատվական միգրացիա», այն է՝ տարբեր պետության քաղաքացիներ (կամ քաղաքացիություն չունեցող անձինք) միմյանց «պետությունների վիրտուալ տարածք (սահման)» են մուտք գործում, տեղեկատվություն փնտրելու, տարածելու, վիրտուալ դաշտում աշխատելու կամ այլ նպատակներով (օրինակ՝ «գունավոր» հեղափոխությունների կամ «արաբական գարնան» հայտնի իրադարձությունների ժամանակ «հեղափոխական» երկրների տեղեկատվական-լրատվական վիրտուալ տարածքը լի էր օտարերկրյա քաղաքացիներով, ինչը տվյալ պետությունների տեղեկատվական անվտանգության տեսանկյունից կարելի էր դիտել որպես սպառնալիք, և մասամբ դա այդպես էր: Կամ մեկ այլ օրինակ. հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի մասնագետների մոտ լայնորեն տարածված է «վիրտուալ աշխատանքային միգրացիան»։ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծրագրավորողներն աշխատում են այլ պետության

վիրտուալ տարածքում (այլ պետությունում գտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մոտ)՝ ֆիզիկապես չլքելով իրենց երկիրը՝ Հայաստանը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ համաշխարհային միգրացիոն գործընթացներն այլակերպման (տրանսֆորմացիայի) են ենթարկվել, քանի որ «պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը)» իրական սոցիալական երևույթ է, որն իր իրավական, սոցիալական, քաղաքական և մշակութային ամրագրումը պետք է գտնի միջազգային միգրացիոն դոկտրինայում՝ միևնույն ժամանակ սահմանելով, որ «պետական վիրտուալ տարածքը (սահմանը)» - *ֆիզիկական (մատերի) իրականությունից սկիզբ առնող (երբեմն էլ անկախ) և վերջինիս համար հետևանքներ առաջացնող արհեստական (սուբյեկտիվ) իրականության այն հարթակն (սուբստանցիան) է, որտեղ շոշափվում են պետության և հասարակության անվտանգության, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, կրոնական և մշակութային շահերը (կեցությունը), որոնց սահմանները վերջանում են այնտեղ ուր սկսվում է մեկ այլ պետության վերոնշյալ շահերի սահմանները (հեղինակի կողմից ներկայացված սահմանում, բնորոշում)։*

Ներկայումս «պետական վիրտուալ տարածքը (սահմանը)» իրողություն է, և յուրաքանչյուր օր այդ վիրտուալ տարածքներ մուտք ու ելք են անում միլիոնավոր «վիրտուալ միգրանտներ»։ Այս կապակցությամբ պետք է նշենք, որ «պետական վիրտուալ տարածքը (սահմանը)», իրողություն լինելով, միջազգային հանրության կողմից իրավական կարգավորում չունի, ինչի բացասական հետևանքներն արդեն իսկ զգացվում են, քանի որ մարդկային հասարակության չվերահսկվող գործունեության տեսակները վտանգ են ներկայացնում այդ նույն հասարակության անդամների համար, օրինակ՝ «գունավոր» հեղափոխությունների կամ «արաբական գարնան» հայտնի իրադարձությունների ժամանակ «հեղափոխական» երկրների տեղեկատվական-լրատվական վիրտուալ տարածքը վիրտուալ միգրանտների կողմից ապակայունացնելու գործողությունները և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել. ա) 21-րդ դարում պետությունները ֆիզիկական սահմաններից զատ բաժանվում են նաև վիրտուալ սահմաններով, բ) մարդկանց միգրացիան հնարավոր է ինչպես պետությունների ֆիզիկական սահմաններով, այնպես էլ վիրտուալ սահմաններով, գ) մարդկանց թե՛ ֆիզիկական, թե՛ վիրտուալ միգրացիան պետությունների համար առաջացնում է սոցիալական, տնտեսական, իրավական և այլ բնույթի հետևանքներ (բարենպաստ և անբարենպաստ), դ) միջազգային իրավունքի դոկտրինայում բացակայում է «պետական վիրտուալ տարածք (սահման)» իրողության

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կարգավորումը, ինչի արդյունքում էլ ներկայումս կարգավորվում է մարդկանց ֆիզիկական միգրացիան, իսկ վիրտուալ միգրացիան իրավական վերահսկողությունից դուրս է, որն առաջին հերթին վտանգ է ներկայացնում հենց անհատի համար՝ անվերահսկելի լինելու հանգամանքով պայմանավորված:

Միգրացիոն իրավունքի էությունն արտահայտվում է օրենսդրորեն ձևակերպված (ամրագրված) միգրացիոն իրավակարգում, որը՝ ա) միգրացիան դիտարկում է պետության կողմից կարգավորվող հասարակական հարաբերություն՝ բացահայտելով այդ ֆենոմենի նորմատիվ-իրավական բովանդակությունը, բ) սահմանելով դրա իրավական կարգավորման առարկան, գ) բացահայտելով իրավական կարգավորման սուբյեկտը, որպես մարմինների համակցություն, որոնք պատասխանատու են միգրացիոն գործընթացների պլանավորման (ծրագրման) և կարգավորման համար<sup>6</sup>: Այսինքն, միգրացիոն իրավունքի էությունից է բխում այն հանգամանքը, որ ներկայումս միջազգային և ներպետական միգրացիոն դոկտրինայում «պետական վիրտուալ տարածք (սահման)» իրողության իրավակարգավորումը բխում է անձանց վիրտուալ միգրացիոն իրավունքի պաշտպանությունից:

Ժամանակակից աշխարհում միգրացիան իր աննախադեպ տարածականությամբ, անկախ նրանում ներգրավված երկրների զարգացման աստիճանից, դարձել է պետությունների հասարակական-քաղաքական կյանքի և առօրյա գործունեության, սոցիալական խնդիրների մտահոգությունների անբաժանելի մասը:

Նոր ժամանակներում անցյալի բնակչության սովորույթը՝ բնակչության մեկնել մի երկրից մյուսը, յուրովի դրսևորում է ստացել: Պարզապես փոխվել է մարդկանց տեղաշարժի ակտիվությունը, ավելացել է նրանցում ընդգրկված մարդկանց քանակը:

Փոխվել են նաև մարդկանց սեփական երկրից մի այլ պետություն փոխադրվելու ուղղությունները: Եթե մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը նշմարելի էր արևմուտքի զարգացած պետություններից գաղութացման նպատակով բնակչության որոշ մասի արտահոսքը թույլ զարգացած երկրներ, ապա ներկայումս ճիշտ հակառակ գործընթացն է տիրապետող:

Միգրացիայի դիմագիծը հիմնովին փոխվել է: Տարբեր, հիմնականում ռազմական բախումների պատճառով զանգվածային բնույթ է ստացել Ասիայի և Աֆրիկայի երկրների բնակչության հոսքը արևմուտքի երկրներ:

Տրամաբանական է, որ միգրացիայի հիմնահարցերը շատ երկրներում հասարակական լայն քննության առարկա է դարձել: Բնականաբար այն գտնվում է նաև գիտական շրջանակների ուշադրու-

թյան կենտրոնում:

Միգրացիայի համակողմանի քննությունը և երևույթի գիտական հիմնավորումները հրատապ են դարձրել տալ նրա համակողմանի բացատրությունը: Մի շարք գիտնականներ միգրացիայի բնութագրմանը դրսևորում են տարբերակված մոտեցում: Ինչպես այդ հեղինակներն են բնորոշում, միգրացիան որպես երևույթ ունի լայն և նեղ իմաստավորում: Այսպես, Ն.Վ.Կուրմանը և Վ.Ի.Ստարովերովը կողմնակից են միգրացիայի ընդգրկում բնութագրմանը: Ըստ նրանց՝ միգրացիա է հասկացվում բնակչության տերիտորիալ շարժունակության ցանկացած ձևը՝ անկախ նրա հաճախականությունից, նպատակից և տևողությունից<sup>7</sup>:

Միգրացիա երևույթը նեղ իմաստով Գ.Ս.Վեչկաևովը բնութագրում է պարզապես մարդկանց բնակելի կոնկրետ վայրի սահմաններից դուրս բնակչության տեղի փոփոխում<sup>8</sup>:

Կարծում ենք՝ միգրացիայի այս երկու բնութագրումներն էլ ներկայացնում են երևույթի այս կամ այն դրսևորումների հիմնավոր պատկերը:

Մեր համոզմամբ, միգրացիա հիմնահարցի համակողմանի քննության համար ցանկալի է ներառել վերը նշված երկու գնահատականների ընդհանրական, ամբողջական տեսակետը:

Միգրացիա երևույթի համակողմանի բնութագրման համար, կարծում ենք, առավել հեռանկարային է հետևյալ ձևակերպումը. «Միգրացիան սոցիալ ժողովրդագրական գործընթաց է, որին բնորոշ է բնակչության տերիտորիալ շարժունակությունը, մարդկանց կողմից բնակավայրի փոփոխման ցանկացած ձևը, անկախ նրանց հաճախականությունից, նպատակից և տևողությունից»: Ամփոփելով՝ կարելի է հետևություն անել, որ միգրացիան բնակչության բազմազան տարածքային շարժն է՝ անկախ վերջինի բնույթից և նպատակից:

Նոր ժամանակների իրողություն է, որ միգրացիան հսկայական ծավալային բնույթ է ստացել և աչքի է ընկնում բազմազանությամբ: Այդ գործընթացում նորանոր երկրներ ընդգրկելու միտվածությամբ միգրացիան զգալի ներգործություն է ունենում շատ պետությունների սոցիալ-տնտեսական ոլորտի, հասարակական-քաղաքական կյանքի բնականոն ընթացքի վրա:

Հանրահայտ է արևմուտքի և արևելյան երկրների սոցիալ-տնտեսական զարգացումների միջև առկա անջրպետը: Այն չի հաղթահարվել ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս: Ուստի, միգրացիան տարբեր ժամանակներում և զանազան երկրներում տարատեսակ արժևորում է ստացել: Այսպես, այն երկրներում, որոնցում առաջնահերթային է աշխատուժի պակասի համալրումը, միգրանտներին ընդու-

նում են բարյացակամորեն:

Միգրանտների նկատմամբ ճիշտ հակառակ մոտեցում է դրսևորվում այն պետություններում, որոնցում առկա է աշխատուժի ավելցուկ: Միգրանտների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը խորանում է, երբ այդ երկրներում նկատվում է միգրացիոն հոսքերի անկառավարելի և սրընթաց աճ:

Քանի որ միգրացիան իր բնույթով և տարածականությամբ շոշափում է բազմաթիվ երկրների շահերը, ուստի, գրեթե բոլոր պետությունները հարկադրված են հիմնավորապես վերանայել միգրացիայի վերաբերյալ իրենց երկրում գործող օրենսդրության շատ կետերը:

Նկատելի է, որ այն երկրները, որտեղ առկա է միգրանտների աննախադեպ մեծաքանակ ներհոս, նրանցում վերանայվում են միգրանտներին վերաբերող օրենսդրությունը՝ խստացնելով միգրանտների մուտքի և բնակվելու պայմանները: Մինչդեռ այն երկրները, ուր նկատելի չէ միգրանտների համատարած ներհոսքը, գործող օրենսդրությունում էական փոփոխություններ չեն կատարվում: Այդ պետություններում առավել հետևողականորեն են առաջնորդվում միջազգային իրավական դոկտրինայով և այլ պետությունների հետ նախկինում կնքված համաձայնագրերով:

Միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինայի սկզբունքներով է առաջնորդվում Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանում միգրացիոն գործընթացների սոցիալ-իրավական կանոնավորման պետական քաղաքականությունը իր էությանը ժողովրդավարական բնույթ ունի: ՀՀ-ում գործող օրենսդրությունը, ելնելով սեփական երկրի առանձնահատկություններից, օգտագործել է միգրացիայի ասպարեզում առաջավոր երկրների դրական փորձը: Այդ կնշանակի, որ միգրացիոն օրենսդրություն մշակելիս ՀՀ-ում առաջնորդվել են այն սկզբունքով, որ միգրացիոն գործընթացների կարգավորման սուբյեկտ են հանդիսանում պետությունները և միջազգային կազմակերպությունները:

Տվյալ դեպքում պետությունը կանոնակարգում է միգրացիոն գործընթացը՝ ելնելով երկրի սահմանադրությունից և առաջնորդվելով իրավունքի մյուս նորմերով՝ քաղաքացիության, աղմինիստրատիվ և այլն: Միաժամանակ, ՀՀ-ն, առաջնորդվելով երկրի և ժողովրդի շահերով, միանում է կամ անտեսում միգրանտներին վերաբերվող միջազգային այս կամ այն համաձայնագիրը:

Այսպես, օրինակ, Եվրոպական միության մի շարք երկրներ փոխհամաձայնության գալով, զգալիորեն սահմանափակեցին միգրանտների մուտքը սեփական երկրներ: Ավելին, որոշակիորեն սահմանա-

փակվեցին նաև ընդունող երկրում գտնվող միգրանտների քաղաքացիական իրավունքները:

Հայկական պետությունը միանգամայն այլ մոտեցում դրսևորեց սիրիահայ փախստականների նկատմամբ: Հանրապետությունում հնարավորինս աջակցում են սիրիահայերի՝ բնակության և ապրելու պայմաններ ստեղծելուն, աշխատանքային խնդիրները դրականորեն լուծելուն: Այլ կերպ ասած՝ վերջերս արևմուտքում ձևավորված միգրանտների նկատմամբ ժխտողական վերաբերմունքի փոխարեն ՀՀ-ում իշխանությունների և հանրության կողմից սիրիահայ փախստականների նկատմամբ դրսևորվում է միանգամայն բարիդրացիական վերաբերմունք:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությունում հիմնավորված սկզբունքով աջակցություն է դրսևորում ափյուռքի հայրենակիցների նկատմամբ:

Սակայն վերը նշված միգրանտների նկատմամբ տարատեսակ մոտեցումը ամենևին չի նշանակում, թե ՀՀ-ն միգրացիայի հարցում դադարում է առաջնորդվել միջազգային համաձայնագրերով: Միգրացիայի խնդիրներով ՀՀ-ի միջազգային գործունեության կարևոր ուղղություններից է տարբեր պետությունների, հատկապես հայ միգրանտներին ընդունող երկրների հետ համագործակցությունը: Այն իրականացվում է պետությունների հետ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքմամբ:

ՀՀ-ի կողմից այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերի հիմքում ընկած են միմյանց երկրներում միգրանտների իրավունքի և պարտականությունների պաշտպանության խնդիրները: Համաձայնագրերը կնքվել են՝ առաջնորդվելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներով:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության հետ կնքված պայմանագրում արտացոլվել են այնպիսի առաջնային դրույթներ, ինչպես միմյանց երկրներում միգրանտների իրավական կարգավիճակի որոշումը: Դրանից էլ բխում է միգրանտների աշխատանքի տեղավորման և նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, սոցիալական, թոշակային և բուժական ապահովման խնդիրները: Համաձայնագրում արտացոլվել է նաև միգրանտների ընտանիքի անդամների իրավական դրության հստակեցման անհրաժեշտությունը:

Վերջին ժամանակներս նկատելի է ասիական և աֆրիկյան երկրներից դեպի արևմուտք միգրանտների զանգվածային հոսքը: Աշխարհաքաղաքական նոր զարգացումները անգամ ժողովրդավարական երկրներին հարկադրեցին էականորեն վերանայել պետության միգրացիոն քաղաքականության մի շարք դրույթներ: Արևմուտքի պետությունները հա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ճախ դիմում են հարկադրական միջոցների՝ հնարավորինս արգելելով միգրանտների զանգվածային հոսքը սեփական երկիր:

Ինչպես միշտ, ներկայումս էլ պետությունների միջև միգրացիոն գործընթացների կարգավորման գործում առաջատար դերակատարում ունի Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ): ՄՄԿ-ն իր ներկայացուցչությունն ունի բազմաթիվ երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ում ՄՄԿ-ն հիմնականում իրականացնում է խորհրդատվական առաքելություն: Խրախուսելի է ՄՄԿ-ի կողմից Հայաստանի պոտենցիալ միգրանտների համար տեղեկատվական դիդակտիկ գրքույկների հրատարակումը: Միաժամանակ ՄՄԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունը մարզերում, որտեղից ամենից շատ են արտագաղթում բնակիչները, պարբերաբար հարց ու պատասխանի երեկոներ է կազմակերպում:

Միգրանտների հետ տարվող աշխատանքում իր ներդրումը ունի նաև աշխատանքի միջազգային կազմակերպությունը: Նրա հիմնական խնդիրը միգրանտների աշխատանքի պաշտպանությունն է: Այդ կազմակերպությունը նույնպես դրական գործունեություն է ծավալում բազմաթիվ երկրներում: Նրա ակտիվ գործունեության անհրաժեշտությունը Հայաստանում մեծ չէ, քանի որ սակավաթիվ են ՀՀ-ում միգրանտների քանակը:

Նկատելի է, որ ժամանակակից պայմաններում միգրանտների մեծ մասը փախստականներն են: Ուստի, առաջնային նշանակություն է ձեռք բերում փախստականների գործով ՄԱԿ-ի գլխավոր կոմիսարի դերակատարումը:

Տարբեր երկրներում միգրանտների առջև ծառանում են դժվարին, հաճախ անլուծելի խնդիրներ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ նրանցից քչերն են դիմում ՄԱԿ-ի՝ փախստականների գործով կոմիսարի օժանդակությանը: Միգրանտներից շատերը պարզապես տեղյակ չեն միջազգային տվյալ առաքելության գոյության մասին: Գիտեցողների մի մասն էլ թերահավատորեն է մոտենում այդ հաստատության իրավասությանը՝ լուծելու իրենց առջև ծառայած խնդիրները:

Հանրության շրջանում ՄԱԿ-ի պաշտոնյայի գործունեության նկատմամբ թերահավատությունը չեն կիսում բազմաթիվ, հատկապես արևմուտքի երկրների իշխանական մարմինները: Փախստականների հետ առնչվող բոլոր պետությունների համար ՄԱԿ-ի փախստականների գործող գլխավոր կոմիսարի գործունեությունը զսպիչ միջոց է իրենց երկրում գտնվող միգրանտների իրավունքների պաշտպանության հարցում:

Անկասկած, միգրանտների իրավունքների

պաշտպանության խնդրում առաջնային դերակատարումը պատկանում է ընդունող երկրի իրավասու մարմիններին: Պետությունների իշխանությունները առաջնորդվում են գործող օրենսդրությամբ: Երկրների քաղաքացիական օրենսդրության հիմքում առաջնայինը պետության միջազգային պարտավորություններն են: Այդ իմաստով խրախուսելի է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքի 2-րդ հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից»<sup>9</sup>:

Փորձը ցույց է տալիս, որ միգրացիայի կարգավորման հարցում ՀՀ-ի այդ ոլորտի պատասխանատուները հետևողականորեն առաջնորդվում են ինչպես երկրում գործող օրենսդրությամբ, այնպես էլ Հայաստանի ստանձած միջազգային պարտավորություններով:

Տարիներ շարունակ ՀՀ-ից միգրացիան կրում է միակողմանի բնույթ: Երկրից արտերկրներ մեկնում են հազարավոր մարդիկ, իսկ մեր երկիր ժամանում եզակիները: Ըստ որում, ՀՀ ժամանողները մեր երկիրը դիտում են որպես միջանկյալ ուղի արևմուտք մեկնելու ճանապարհին: Նման պարագայում ՀՀ-ի իշխանությունների ուշադրությունը ամենից շատ կենտրոնացած է արտերկրներում տևական կամ կարճաժամկետ բնակություն հաստատած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Այս խնդրում իրավասու մարմինները ղեկավարվում են հանրապետությունում գործող օրենսդրությամբ:

Իրոք, ՀՀ-ի սեփական քաղաքացիների իրավունքների պաշտպանության նկատմամբ պետական պարտավորվածությունը սահմանված է օրենքով. «Հանրապետությունից դուրս Հայաստանի Հանրապետության քաղաքացիները օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունից և հովանավորությունից»: Միաժամանակ այդ նույն օրենքով սահմանվում է, որ. «Հայաստանի Հանրապետությունը, նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան»<sup>10</sup>:

ՀՀ-ի քաղաքացիության մասին օրենքով հիմնավորվում է արտերկրում Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության՝ մեր պետու-

www.journal.lawinstitute.am

թյան ստանձնած պարտավորությունը: Միաժամանակ օրենքում մատնանշվում է այն գերատեսչությունները և կոնկրետ անձինք, ովքեր պարտավոր են իրականացնել մեր քաղաքացիների իրավունքների պաշտպանության առաքելությունը:

Միջազգային պարտավորությունների կատարման տեսանկյունից կարևորվում է, ՀՀ քաղաքացիության մասին օրենքով հավաստիացվում է Հայաստանի հետևողական մեկ այլ դիրքորոշման վերաբերյալ: Ըստ այդ մոտեցման՝ Հայաստանը արտերկրներում գտնվող սեփական քաղաքացիների իրավունքները պաշտպանելիս առաջնորդվում է նրանց ընդունած երկրների օրենսդրությամբ և ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններով:

Հայաստանի Հանրապետության պարտավորվածությունը՝ արտերկրում գտնվող սեփական քաղաքացիների իրավունքների պաշտպանությունում առաջնորդվել միջազգային իրավունքի նորմերով, ենթադրում է համագործակցել ընդունող երկրների միգրացիայի ոլորտի իրավասու մարմինների հետ: Այն իրականացվում է ՀՀ-ի՝ այլ պետությունների հետ պայմանագրեր կնքելու միջոցով: Պայմանագրերի կենսագործման ասպարեզում հեռանկարային են միգրացիայի ոլորտի պատասխանատու անձանց փոխայցելությունները, միգրացիայի հարցերով համատեղ սեմինարների կազմակերպումը և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ն, ՌԴ-ն, ինչպես նաև արևմուտքի մի շարք այլ երկրներ միգրացիայի խնդիրներին առնչվող հարցերում առաջնորդվում են միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինայի հիմնարար սկզբունքներով: Սակայն նկատելի է նաև, որ առանձին պետություններ, ելնելով իրենց պետությունների ներքաղաքական իրավիճակից, ինչպես նաև արտաքին քաղաքական զարգացումներից, երբեմն գործնականում յուրովի են մեկնաբանում վերը նշված դոկտրինայի սկզբունքները:

Հիշատակության է արժանի, որ միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինայում միգրացիոն հիմնահարցերում երկու մոտեցում է դրսևորվում: Ըստ նրա՝ պետությունները պարտավոր են.

ա) ըմբռնումով մոտենալ սեփական երկրները միգրանտների կանոնակարգված ներհոսին: Անհրաժեշտ է գիտակցել, որ ընդունող երկրում օրինական ճանապարհով միգրանտների առկայությունը փաստորեն լրացնում է տվյալ երկրի աշխատաշուկայում առաջացած ճեղքվածքը: Նման պարագայում որոշակի դրական փոփոխություններ են նկատվում նաև տեղաբնակների և եկվորների փոխհարաբերություններում,

բ) միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինայում բացասական վերաբերմունք է դրսևորվում անօրինական միգրացիայի բոլոր դրսևորումների նկատմամբ: Նման ժխտողական վերաբերմունքը հիմնավոր է, քանի որ անկանոն միգրացիան խաթարում է ինչպես ընդունող, այնպես էլ ելքի պետությունների տնտեսության բնականոն զարգացումը: Այս երևույթը բացասաբար է ազդում նաև միգրացիոն գործընթացում ընդգրկված պետությունների ներքաղաքական իրավիճակի վրա: Այն հանգեցնում է անգամ հասարակական բախումների:

Միգրացիոն իրավունքի դոկտրինայի առանցքում պետությունների և հասարակական կազմակերպությունների կողմից միգրանտների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի դրսևորման անհրաժեշտության հիմնավորումն է: Դոկտրինան հռչակում է մարդկանց, անկախ նրանց ազգությունից, կրոնական պատկանելիությունից, սեռից և տարիքից, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Դոկտրինայում ոչ միայն հռչակվում են մարդասիրական սկզբունքներ, այլև մատնանշվում այն հաստատությունների անունները և հասարակական կազմակերպությունները, որոնք պարտավոր են կյանքի կոչել իրավական դոկտրինայի դրույթները:

Վերը նշված դոկտրինայում միգրանտների նկատմամբ մարդասիրական մոտեցման պատասխանատուներն են համարվում միջազգային կազմակերպությունները, միգրացիոն գործընթացում ընդգրկված պետությունների իշխանությունները և հասարակության լայն շրջանակները:

Միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինայում ընդգծվում է նրա հիմնարար դրույթների պրակտիկ կիրառման անհրաժեշտությունը:

Միգրացիոն իրավունքի միջազգային իրավական դոկտրինան հռչակում է տվյալ ոլորտում պետությունների, միգրացիոն ոլորտի կարգավորման իրավասու մարմինների և երկրների լայն հասարակայնության գործունեության հիմնարար սկզբունքները: Միաժամանակ հիմնավորվում է վերը նշված դոկտրինայի դրույթների գործնականում իրագործման անհրաժեշտությունը, որը իր նպաստը կրերի բոլոր երկրներում միգրացիոն իրավիճակի բարելավման և մարդկանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունք դրսևորելու համար:

- <sup>1</sup> «Էթնոսֆերա» ազգամիջյան կրթության կենտրոն, 23.03.2016, էջ 1/4:
- <sup>2</sup> Նույն տեղում, էջ 3/4
- <sup>3</sup> Маршалл Маклюэн. Галактика Гутенберга. Становление человека печатающего: Академический проект, 2005. - 496 с.
- <sup>4</sup> McLuhan, Marshall, Understanding Media. (Gingko Press), 2003, p. 6.
- <sup>5</sup> Հին հունարենից կոսմոպոլիտ /κοσμοπολίτης (kosmopolites)/ եզրը քարզմանարար նշանակում է աշխարհի մարդ, ժամանակակից իմաստով՝ աշխարհի քաղաքացի:
- <sup>6</sup> Брик А.Д. «Ограничения в миграционном праве в контексте теоретико- правовой интерпретации его сущности» /ЮРИСТЪ – ПРАВОВЕДЪ 2008(6)/ <http://elibrary.ru/item.asp?id=15115179>.
- <sup>7</sup> Население и трудовые ресурсы РСФСР // под ред. Моиссенко В.М., М., 1982, С. 6.
- <sup>8</sup> Вечканов Г.С. Миграция трудовых ресурсов в СССР. ЛГУ, 1981, С. 73.
- <sup>9</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը, Երևան, 1995թ., էջ. 1/8:
- <sup>10</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը , Երևան 1995., էջ 2/8:

**Ափոտ Այրապետյան**

Кандидат юридических наук, доцент

Докторант академии государственного управления РА

#### РЕЗЮМЕ

##### *Миграционное право в международно-правовой доктрине и практике*

В статье рассматриваются факторы, влияющие сегодня на международную миграцию в свете международно-правовой доктрины. В частности, автор статьи уделяет внимание на новые социальные явления мирового уровня, как виртуальная трудовая миграция, медиа-информационная миграция, виртуальная территория государств (граница) и т.д. Автором представлен научно- практической анализ вышеперечисленных социально-правовых явлений, влияющих на международную миграцию.

**Ключевые слова:** виртуальная трудовая миграция, медиа-информационная миграция, виртуальная территория государств (граница), глобальная деревня, трансформация миграционных процессов.

**Ashot Hayrapetyan**

PhD in law, Associate professor

Doctoral in the Public Administration

Academy of the Republic of Armenia

#### SUMMARY

##### *The migration law in the scope of international legal doctrine and practice*

This article examines the factors affecting international migration processes these days, in the light of international legal doctrine. In particular, the author globally focuses on new social phenomena, such as virtual labor migration, information and media migration, virtual space of states (borders) etc. In the article author represents scientific practical analysis about above mentioned social and legal phenomena which have an influence on international migration processes.

**Keywords:** virtual labor migration, information and media migration, virtual space of states (borders), global village, disfigure of migration processes (transformation).